

Հայ գրականության հանրապետական օլիմպիադայի

Հարցաշարերի պատասխաններ

XII դասարան

1. Մփյուռքահայ գրականության առաջին սերնդի անուրանալի տաղանդներից է Շահան Շահնուրը՝ Շահնուր Քերեսթեճյանը: Շահան անունը իր սիրելի ուսուցչի՝ Պերպերյան վարժարանի տնօրեն Շահան Պերպերյանի անունն է, որ սիրով և երախտագետ աշակերտի երկյուղածությամբ դարձրել է իր գրական անունը: Շահնուրը ծնվել է Սկյուտարում 1922-ին, հայկական հարցի պատճառով տեղափոխվել է Փարիզ և ամբողջ կյանքն անցկացրել է այնտեղ: Ստեղծագործել է սկզբում ֆրանսերեն՝ Արմեն Լյուբե գրական անունով: Ֆրանսիայի ընթերցողի սիրելի բանաստեղծներից է, ֆրանսիական ակադեմիայի «Ժուֆրուա Ռենո» մրցանակակիրը: Շահնուրը սփյուռքահայ գրականության հիմնադիրներից է, նահանջի գրականության սկզբնավորողը. նա առաջինն է անդրադարձել հայերի ուժացման խնդրին, ցավով արձագանքել արմատներից հեռացող երիտասարդների ճակատագրին: 1929-ին Փարիզում լույս է տեսնում Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպը, որտեղ նա ներկայացնում է Պոլսից Փարիզ գաղթած 4 ընկերների ճակատագիրը: Ազգային խնդիրները Շահնուրը ներկայացնում է սիրային սյուժեի միջոցով: Ազգայինի պահպանման կարևոր օղակը համարելով ընտանիքը՝ Շահնուրը ներկայացնում է ընտանիք չունեցող ընկերներին. Պիերը ազգայինից նահանջում է Նենեթի նկատմամբ ունեցած կործանարար սիրո պատճառով, Սուրենը, որ գրող է ու գրում է ֆրանսերեն, ասում է. «Ուրիշներու պես մենք ալ մեր կյանքը ու հավատքը թաղեցինք պատերազմի ընթացքին... Հայ աղջիկը մնաց հեռուն, մնաց լքված, ան, որ անհրաժեշտ էր մեր արյունին»: Եվ նահանջում են լեզու ու հայրենիք, ընտանիք ու ծնող, նահանջում է լեզուն: Նրանցից ոչ ոք չի կարողանում պահել ազգայինը և հնչում է Շահնուրի նահանջի շեփոքը՝ ազդարարելով, որ օտարը չի կարող հասկանալ մեզ, քանզի «ֆրանսերենը գոյություն չունի «մայր» բառին, «հայ բառին», «աքսոր» բառին... Ֆրանսերենը չկա մեր «գաղթական»-ին, մեր «որբ»-ին: Շահնուրի վեպում արժարժված գերխնդիրը հայերի՝ ազգային արժեքներից ու հատկանիշներից հեռանալը, օտարին ձուլվելը, ազգային ինքնությունը կորցնելն է, գրողին մտահոգում է ոչ միայն ներկան, այլև ապագան: «Իսկ մենք կվճարենք իբրև փրկագին այն, որ պիտի գա: Իբրև վերջին փրկագին՝ մանուկներ, որոնք կրնային մեծնալ, ապագայի սերունդներ, որոնք մեզմե վերջ պիտի գային: Որովհետև այն, որ պիտի գա, պիտի ըլլա օտար բանիվ և գործով, կամա և ակամա, գիտությամբ և անգիտությամբ, մեղա՛, մեղա՛ Արարատին»: Ավա՛ դ, այսօր ևս հնչում է Շահնուրի նահանջի փողը նաև այստեղ՝ հայրենիքում, առավել ևս օտար ավերում:

2. Կոստան Զարյանին անվանել են «հայ գրականության մենակ», քանզի այս վիթխարի հսկան չունի իր երկվորյակ գրողը, նրա երգած հայրենիքը, հայ ոգին, մարդը և մշակույթը բոլորովին նոր երևույթ էին մեր գրականության մեջ:

Ծնվել է Շամախի քաղաքում, զինվորականի ընտանիքում, սակայն դեռևս պատանի հեռացել է Կովկասից, սովորել Ֆրանսիայում, առաջին բանաստեղծությունները գրում է ֆրանսերեն: Ճակատագրական է լինում հանդիպումը բելգիացի մեծ գրող Էմիլ Վերհարնի հետ, որը մի գրույցի ժամանակ նրան հարցնում է, թե ինչ լեզվով է աղոթում: Զարյանը պատասխանում է, որ մանուկ հասակին մայրն իրեն սովորեցրել էր «Հայր մերը» գրաբար:

- Հայերե՞ն,- հարցրել էր Վերհարնը և լսելով դրական պատասխան՝ ասել է.

- Ուրեմն ի՞նչ է բանաստեղծությունը, եթե ոչ մշտատև աղոթք:

Եվ Զարյանը սկսել է սովորել իր մայրենի լեզուն, այցելել է Մխիթարյաններին՝ ուսումնասիրելու և յուրացնելու հայերենը: Նրա առաջին հայերեն գիրքը «Օրերի պսակը» բանաստեղծությունների ժողովածուն է:

Կոստան Զարյանի ստեղծագործության մեջ ուրույն տեղ ունի «Տատրագումի հարսը» պոեմը, (1930թ. «Հայրենիք», նվիրված է Ա.Ահարոնյանին), այն բաղկացած է 5-մասից՝ «Գյուղում հարսանիք է»: Պոեմի հերոսուհուն՝ Մանային, վաղ տարիքում, իր կամքին հակառակ, ամուսնացնում են տատրագումի Հովանի հետ: Հարսանիքի ժամանակ լուր են բերում, թե թուրքերը հարձակվել են հարևան գյուղի վրա, «աղջիկ են տանում, տավար ու նախիր, դիրքեր բռնեցեք»: Հովանը միանում է պաշտպաններին:

II – մասը՝ «Հովանը գնում է զինվոր»: Հաջորդ աշնանը շեյխի ուղարկած մարդիկ տանում են ամբողջ բերքը: Հովանը զայրացած ու դառնացած գնում է քահանայի մոտ՝ հաղորդություն ստանում ու խնդրում է Մանային օգնել.

«Մանան չմոռնաք...ինձ համար ընդմիջտ աշխարհը վերջացավ...հայդուկն իր կնոջ հոգալ չի կարող, թող ժողովուրդը հսկե, մտածե...»:

III-մասը՝ «Ֆեդայիները»: Շրջում են Սասունի լեռներում, առջևից գնում է Մակար ծերունին: Սրանց մեջ է Հովանը. հիշում է կնոջը, բայց անգամ այս հիշողությունն է ուխտագանջություն համարում:

IV- մասը՝ «Սանան»: Մանան շարունակում է սպասել ամուսնուն, սակայն անցել է 6 տարի, բայց նա լուր չունի. ոչ ոք այլևս չի հիշում նրան, չի խոսում հետը, որովհետև ֆեդայու կնոջն անգամ հայացքով չի կարելի ցանկալ, մեղանչել նրա դեմ:

Ան տառում զբոսնելիս Մանային հանդիպում է քուրդ երիտասարդը և փախցնում:

V- մասը՝ «Մահը»: Մանան երջանիկ է, նա նոր միայն սիրել ու հարսնացել է: Մակայն լուրը հասցնում են ֆեդայիներին, և նրանք սպանում են քրդին ու տանում Մանային: Ֆեդայիները ստիպում են Հովանին սրով սպանել Մանային, նա սպանում է, որից հետո նետում է արյունոտ սուրն ու խելագարվում:

Հայտնի է, որ պոեմի հիմքում ընկած է Ռուբենի (Մինաս Տեր-Մինասյան) «Հայ հեղափոխականի մը հշատակները» գրքից մի իրական դեպք: Զարյանը լսել է

Ռուբենին, որը որոշակի դեր էր ունեցել հերոսների ճակատագրում: Ողբերգական վախճանը չի հասկանում Սանան.

Ես սիրեցի... մե՞ղք է սիրել...

Ո՞վ է մեղավոր հարցին կարող ենք պատասխանել ոչ միանշանակ. մեղավոր էր համիդյան հայատյաց քաղաքականությունը, որի պատճառով դեռ ամուսին չտեսած հարսը այրիանում է: Մեղավոր են աղաթն ու սովորությունը, հասարակական օրենքները, որ կաշկանդում են ազատ սիրո սահմանները: Մեղավոր է արդյոք Հովանը, որ պաշտպանում է իր աշխատանքը, իր ընտանիքը, կնոջ պատիվը, իր գյուղը: Ակամա մարդասպան դառնալով՝ նա խելագարվում է: Ծանր զգացումով է ավարտվում պոեմը. մեղավորներ փնտրելու հարկ չկա. մեղավոր են բոլորը՝ ջարդերը, ավանդույթները, կնոջ ստրկական վիճակը, և մեր համակրանքը, իհարկե, Սանայի կողմն է. սիրելու և սիրվելու իրավունք ունեն ամենքը, իսկ Հովանը համոզված է, որ ինքը ևս պիտի հայդուկ դառնա, պաշտպանի իրեն և կնոջը: Պոեմի վերջաբանը ցնցող է. հերոսների ողբերգության մեղավորի անունը հնչում է Սանայի երգում՝ «Քանդվի գահը սուլթանի, յարս զցեց սար ու ձոր...»:

Հովանը խելագար վազում է, իսկ «Բուք էր դրսում, հայոց դաժան լեռների վրա

Աստվածները քայլում էին բարկացած...»

Պոեմում հրաշալի են նկարագրված հայկական բնությունն ու հայ գեղջուկների մարդկային ու ազգային նկարագիրը: Անգերագանցելի մակդիրների ու համեմատությունների հրավառություն է յուրաքանչյուր գլխում:

3. Մուշեղ Գալշոյանը (Մուշեղ Հովեի Մանուկյան) ծնվել է եղեռնից մազապուրծ սասունցու ընտանիքում: Նրա պապը բնակության վայր է ընտրել Թալինի շրջանի Կաթնաղբյուր գյուղը, որտեղ էլ խաղացել է Գալշոյանի հողաբույր ու արևագոծ մանկությունը: Նրան օրորել են Սասնա խրոխտ երգերը, նրա հոգում միշտ ծխացել է Էրզրի կարոտը, նա կարծես ներծծել էր իր մեջ Սասունին վերաբերող բոլոր հիշողություններն ու տեղեկությունները, և երբ նա գյուղ դարձավ, նրա հերոսները հենց այդ մարդիկ էին և թվում է, թե ինքը նրանց հետ եղել է Սասնա լեռներում, ապրել նրանց խաղաղ կյանքը, նաև ջարդի ու տեղահանության անփարատելի մղձավանջը: Ավարտել է գյուղատնտեսական ինստիտուտը, աշխատել մասնագիտությամբ, միաժամանակ դարձել է լրագրող «Ավանգարդ» թերթում և «Գարուն» ամսագրում: Նրա առաջին վիպակը՝ «Ձորի Միրոն», միանգամից բերեց հասուն գրողի ճանաչում: Գալշոյանի գրվածքներից իր սցենարով նկարահանվել են «Հնավանդ թմբուկը», «Բովտուն», «Ձորի Միրոն» կինոնկարները: Հրաշալի է բնութագրել Համո Սահյանը Մուշեղ Գալշոյանին. «Քարից բուսած տաղանդ էր Մուշեղ Գալշոյանը: Քարից բխած աղբյուր, և նրա «ջուրն ուրիշ ջրեն էր»: Աշխարհի հետ կռիվ ուներ Մուշեղ Գալշոյանը: Տիտղոսի ու իշխանության կռիվ չէր այդ կռիվը, այլ՝ կռիվ էր մարդ ծնվելու, մարդ ապրելու և մարդ մեռնելու համար»: Այդ կռիվն էր մղում նաև հրա հերոսը՝ Ձորի

Միրոն, որ իր որդուն սովորեցնում էր, թե աշխարհի ամենամեծ ու անդարձ կորուստը մարդու կորուստն է: Աշխարհի հետ կռիվ ունի Միրոն, խռոված է աշխարհից, անգամ իր տունն է նայում գյուղի հակառակ կողմը: Նա հասկացել էր, որ աշխարհը չուզեց իրենց պաշտպանել, իրենք էլ չկարողացան պաշտպանվել: Նրա արժանապատվությունը վիրավորված է, նրա մեջ ծխում է անցյալը, նրա խռովելը աշխարհից հենց այդ էր նշանակում: Գալշոյանի հերոսները անհաշտ են, ընդվզող, պայքարող, «Սասնա ծռեր»-ի նման խենթ ու հավատավոր: Գալշոյանը հավատում է հողի և մարդու մտերմությանը, նա համոզված է, որ գալու է օրերի օրը, և հանդիպելու են Էրզիրն ու սասունցին:

Մփյուռքահայ գրող Հակոբ Կարապենցը, կարդալով վիպակը, հիացմունքով նկատել է . ««Ձորի Միրոն» գրանիտյա մի էջ է Հայոց Եղեռնի պատմության»: Կարապենցը Գալշոյանին մեծարել է «Մթին Ձորի լուսե մարդ» շրջասույթով: Ահա այս լույսն է դեպի Էրզիր տանող ճանապարհը:

1979-80 թվականներին Ժիրայր Ավետիսյանը Էկրանավորեց Գալշոյանի վիպակը: Գլխավոր՝ Միրոյի դերում նկարվեց ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Սոս Սարգսյանը:

4.«Իմ Սևակը» . Պարույր Սևակի ծննդյան 100-ամյակը:

Մի չար ու անհասկանալի պատահար կտրեց Սևակի երկրային ճանապարհը և խլեց մեզանից, ոչ միայն մեզանից, այլև աշխարհից, քանզի չանախչեցի այդ «սևաթույր Արամազդը» բարձրացավ երկինք, դարձավ նրա անմար աստղորից մեկը:

Իմ Սևակը... Ո՞վ է նա . «Իմ ծանոթների» հետ խոսող թոչուն ու ծաղիկ, խոնավ սեզերի մեջ երեքնուկի թուփ որոնող ինքնավստահ երիտասարդ, իր լեզվին ու հայրենիքին անմնացորդ փարված իմաստուն այր, թե՞ ահավոր եղեռնագործության զոհերին ոգեկոչող կոմիտասյան նվագ... Երևի թե բոլորը միասին:

Սևակն ինձ հետ է ամենուր՝ տանը, դպրոցում, փողոցում, այգում, այնտեղ, ուր ինձ տանում են ոտքերս... Իսկ ոտքերս ինձ տանում են դեպի Սևակի իսկ ձեռքերով կառուցված տուն, իր իսկ ձեռքով տնկած այգին, որտեղ, ավա՛ղ, մի հսկայական գրանիտի տակ դեռ շարունակում է գոչել՝ Կոչե՛մ ապրողաց...

Նստում եմ քարին ու շոյում սառը գրանիտը . մի անսովոր դող է անցնում մարմնովս, աստվածային լույս է ելնում գարնանային ձնծաղիկներով բուրդը նրա շիրիմից, ու ես ակամայից մտաբերում եմ՝ Այս ձեռքերը ...

Հետո նկատում եմ հազիվ ծլարձակված երեքնուկը. դողացող մատներով պոկում եմ թերթիկը՝ Քո անունն եմ ես միշտ պոկում...

Հետո արտասանում եմ «փշատենու փշի նման լեզվի մեջ խրված» քո՛ անունը, որ ատում եմ անասելի սիրով...

Եվ այսպես շարունակ, սիրելի՛ մասնակից:

Մնացյալը՝ մասնակիցը:

Գնահատման չափանիշներ

XII դասարան

1-ին հարց՝ ենթահարց 1. 1 միավոր,

ենթահարց 2. 1 միավոր,

ենթահարց 3. 2 միավոր,

ենթահարց 4. 1 միավոր:

2-րդ հարց՝ ենթահարց 1. 0,5 միավոր,

ենթահարց 2. 0,5 միավոր,

ենթահարց 3. 1 միավոր,

ենթահարց 4. 3 միավոր:

3-րդ հարց՝ ենթահարց 1. 1 միավոր,

ենթահարց 2. 1 միավոր,

ենթահարց 3. 3 միավոր:

4-րդ հարց՝ հարցը ենթահարցեր չունի. 5 միավոր:

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան